հա|սուցանէք 'ի ձեռս դ՞րին. զայն աներկբայ մտօք 'ի յաղ-
թամարայ Ս՞ք Աթոռս՝ և առ մեզ հառեալ գիտասջիք.
Որ և ձեզ սրտի մտօք | ողորմածացդ, և գթացողացդ. ք՞ս
ինքն ողորմեսցի. և լցուսցէ զա՞մ հոգևոր և մարմնաւոր
պակասութի՞ս ձեր. և զերկիրս՝ զքաղաքս և | զա՞մ սահ-
մանս ձեր՝ ա՞մ բարեօք լցուսցէ. և զձեզ յարաժամ ող-
ջո՞ւ՞ թ՝ և խաղ՞ղ՞ ւ՞ թ պահեսցէ. և փրկեսցէ յա՞մ հոգեկան
և մարմնական | փորձանաց. և զա՞մ գործս և զվաստակս
ձեր օրհնեսցէ և արդիւնաւորս արասցէ. և ազատեսցէ
զձեզ ի տարաժամ մահուանէ. և փրկեսցէ | 'ի կերպակերպ
ցաւոց՝ և յանբժշկելի հիւանդութե՞նց. և կատարեսցէ
զա՞մ խնդիրս ձեր 'ի բարին. և քաւել՞վ զա՞մ յանցանս
ձեր. իւր երկն՞յին արքայութե՞ն արժանիս արասցէ զձեզ՝
և զա՞մ ննջեցեալսն ձեր։ Այլ և որքան 'ի Հրաշափառ Ս՞ք
Աթոռս՝ սաղմոս երգութի՞, ժամպաշ|տօն և պատարագք
մատչիցի, յա՞մէ ձեզ և համօրէն ննջեց՞ ւ՞ ց և կենդանեացն
մասն և բաժին եղիցի. Ամէն։

Գրեցաւ հիմատատիկան նամակս օրհնութե՞, ի ռ՞մկէ
թուիս հայ՞ց. 'ի յունիսի ժե։

'Ի Գերահրաշ Ս՞ք Աթոռս Աղթամարայ
Ս՞ք Խաչին Գ՞ի։

Կարմիր կնիք՝




ԾԱՆ. սոյն կնիքը կրկնուած է նաեւ կոնդակի լուսանցքում
կոնդակը բացակցնող երկու թերթերի միացման առթիւ։